

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՈՂԻՐԷ, Ապալին փողոց

ՄՈՒԴԱԹՅԱՄԻ ճ/շՏ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE — RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ

Մէկ անգամի համար տողը 3 շաբաթ, ողջ:
Մէկ անգամէ աւելի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԱՐԻՔՈՒՆ ՀԱՄԱՐ

Տարիաւ 202. ողջ 400
Վեցս Եւսայ 33
Եւսայ 33

ՏԱՐԻՔՈՒՆ ՀԱՄԱՐ

Տարիաւ 26
Վեցս Եւսայ 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՈՒՄ

ՈՒՂԻ ԴՐՈՒԹԻՒՆ

ՓԱՐՈՍ

ԼՍՐԱ Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՄԷԿԱՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳՇԱՐԻ ԵՒ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱԼՓԻՍԻ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Թերթիւ տնօրէնութիւնը որոշած է «Փարոս»-ի 12րդ. թիւէն աւելին այլ ևս թերթ չի չորհել իր եզրադրումով բաժանորդներէն ամեն աւելին որ մինչև այդ թուականը գտնէ եռամսեայ բաժանորդագրութեան մը փոխարէնը չեն վճարած տնօրէնութեան:

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆՆԵՐ

Մօրմի մը ինչպէս կ'աճիլուի. — Հանգրուան թոշակ. — Ծապիկի խնդիր:

Ոչ ոք հասած էք և ոչ ալ ես, այն երանելի ժամանակներուն ուր Եզրադրում ուղարկէի. ոսկի կը... կը... կը մարտին եւ զեր փողոցներուն մէջ:

Այս առաջադրումը սակայն, բերնէ բերան և ծովէ ծով անցնելով՝ արձագանք գտած և իր ճշմարտութիւն մը ընդունուած ըլլալ կը թուի այն երկրին մէջ՝ ուր Գարմէն Սիւլա կը գրէ և Գարոյ թագաւորը կը տիրէ:

Եւ կը պատահի որ հայ քահանայ մը որ ասպետ ըլլալով հանգրծ ոչինչ ունի իր մէջ ասպետական, կը կլէ այս սուտը և կ'ուխտէ... ուղտի մարտդուծեանն օգտուիլ Նեղոսի հովտին մէջ:

Ահա ինչու Գարմէն Չէնճիրեան անուն քահանան ասիկ տարի մը կամ երկու տարի առաջ Գարմէն եկաւ իր բազմ փրկուողներ, նման միւս քահանային որ քիչ մնաց իրեն համալսարանական պիտի կլէինք եթէ ճիշդ ժամանակին չի նշմարելինք թէ այդ երկը շատ շատ համալսարանական բառին միայն առջի երկու վանկերը կրնար ըլլալ:

Արդէն զօրադրութիւն մը երբեք միտակ չի գար: Եւ յետոյ չէք զիտած թէ մեր ազգին ՏԵՐՏԵՐՆԵՐ՝ տէրութիւններուն կը պարտինք երբ մանաւանդ Ռուսներու կամ Սիւլաբաւորէն մեզ կուգան:

Տէր Գարմէն հայրը որ միեւնոյն աստիճանը ալ էր իր վաւականներուն համար, այն օրէն ի վեր որ լուսահագի երկրները լաւագոյն աշխարհ մը փոխադրուած էր, իր պըզտիկներուն ձեռքէն բռնած, երեքաբլթի օր մը — ասոր համար գործը գէշ գնաց — Գարմէն կը հասնի և ուղղակի կ'իջնէ Պէյն-է-Մուրէնի եկեղեցին որ կղերականներուն Բօնիք/հանքաւն է:

Առաջնորդարանի և քահանաներու ներ-

քին գործերուն տեղեակ չըլլալով մօտէն, չպիտի կրնամ ձեզ ցուցունել այն պատճառները որոնցմով մեր նորեկ քահանան տնօրէնեցաւ ուրիշ տեղ փնտռել պատապարան մը, նոյն իսկ առանց միայն բարով ըսելու այն օրէնեայ մարդերուն որոնք պահ մ'առաջ իր եղբայրներն էին ի Բիւրսոստ: Այդ թուականէն առաջ և առկէ ետքը անցած դարձածին վրայ ալ որոշ դաշտափար մը չունիմ, միայն սա պիտիմ սակայն թէ ասիկ երկու ամի չափ առաջ Պատրիարքարանէն հրահանգ եկած է մեր Առաջնորդին, կարգադրի ընել նախկին Տէր Գարմէն օր, ինչպէս կը գուշակեմ, առկա թօնք-գործուն մը ունեցած ըլլալու է Պոլսոյ կեդրոնական իշխանութեանց հետ:

Կարգադրութիւնը կրօնականի մը մօտեցը անիւնով տեղի կուենայ եթէ չեմ սխալիր — և աւոր համար է կարծեմ որ կրնորք քահանայ չեն կրնար ըլլալ — սակայն եկ'ու տես որ, Այլազեան Սրբազանը ինչ ինչ պատճառներով (ի՛նչ ի՛նչ պատճառներ... ահա ամբողջ գիւնարգիտութիւնը Հայերուն) ձեռք չի կրնար կոր անցնել Չէնճիրեանը անոր մօտեցը վար անելու համար, պաշտօն մը որ անշուշտ ասելի լաւ պիտի կատարէր պէրպէս Օնի-կը քան որեւեց եպիսկոպոս մը, ի բաց առեալ Սափրեան Տիմոթէոսէն:

— Ինչո՞ք Չէնճիրեան, քառսուն տարի շարունակ ինամէ, մեծցուր, շոյէ շաքանաւ կապոյն մօրուք, անով գործ տեսիր, ամբողջ յաջողութիւնները անոր պարտէ, անով շրջուր աս ու ան և գնա՛ եկուր Տէր այս փիւս Ֆէշալաներու երկրին մէջ թող տուր որ վար անեն այդ թիւերը մետաքսեայ՝ որոնց վրայ Միթաքսա՝ այնքան անգամ թափած է իր հեղուկ արտադրութիւնը: Անշուշտ հիմայ այս մենախօսութիւնը արտասանելու վրայ է Չէնճիրեան դէռ հայրը, որ քահանայութենէ հրաժարելէն ի վեր ժամագործութեամբ կ'ըրաղի. արհեստ մը որ ամեն կարգադրած քահանայ ընելու էր քանի որ գործին մէջ ժամ կայ:

Արդէն մէջ — ինչպէս կը գրէ «Արեւիկը» — նոյն օրինակ պարագայ մը ներկայացած է: Ուրիշ քահանայ մը իր կարգին կարգադրած ըլլալու դատապարտուած, առ աշխարհ համարելով Պատրիարքարանի հրամանը, իր շահատակութիւնները կը շարունակէ եղբերակեցականի երկոյթին տակ:

Քանի մը հայեր գայթակղելով անոր այս ընթացքէն, օր մը փողոցին մէջ վրայէն կ'անեն ճիւղապէս ու խալախը և այսպէսով վերջ կուտան այդ առկա խնդրոյն:

Արդէն այդ հայերը ոչ զարգացեալ, ոչ հարուստ և ոչ ալ գոնէ թաղական են եղբր, այլ պարզ փոքր գաղթական. դարձեալ «Արեւիկը» է բողոք:

Արդ՝ բանի որ Ս. Առաջնորդը չի կրնար կոր պաշտօնապէս կարգադրած ընել, չի աւարկեօր Գարմէնի մէջ բանի մը կամքի տէր հայեր որ Արդէն մեր հայրենակիցներուն ըրածը ընեն:

Քուրու գաղթականի ըլլալու պէտք չկայ, փոքր փարքերսքնի ըլլալու ալ բաւական է:

Այսպէսով թերեւ մէջտեղէն վերայ բաժանան, բայց աս-պէքը պիտի մնայ կը միտնամ:

Վարժուհիին խնայցին չկայ. պօռաց, բողբոջ, իրաւունքը պաշտպանեց և վերջ ի վերջոյ հանգստեան թոշակ մը կապել տալով — թէ և առեալ միտնայ — քաշուեցաւ տունը, լաւագոյն օրերու և արդարութեան պաշտան սպասելու համար:

Ձիս զրազեցնող վարժուհիին խնդրը չէ — սպասելով աւելի յարմար միջոցի մը — այլ մեր փաղաքական Պատ. Ժողովին առաջաձեռնութիւնը:

Այս վերջացող տարուան մէջ մօտաւորապէս 300 ոսկիի դուար մը ծախսած է վարձատրելու համար առաջնորդի մը, քահանայի մը և վարժուհիի մը... չաշխատած ամիսները:

Եւ անգին ընտանիքներ գտնուած են որ պատու մը հաց չեն ունեցած ակապի տակ գնելիք:

Ուրիշ տեղեր հանգստեան թոշակը շատ աշխատողներուն կուտան, հոս՝ բնաւ չաշխատողներուն:

Չէնճիրեան ի՛նչ-քահանային հաւատարմացած իրաւ է, տակաւին Եզրադրում ուղարկելու կը մարտին կոր Պէյն և Սուրէնի փողոցին մէջ:

— Իրաւունք ունիս, կըսէր ինձի, բարեկամ մը երկի զիշեր, ամեն բան կրնորք ընելու է, թաղական, քահանայ, տիրացու... — Հոս կեցիք, ըսաւ մեզի հետ նստողներէն մին, կրնորք ամեն բան կրնան ըլլալ, ատոր խեղք կը հասնի, բայց երբեք տիրացու չեն կրնար ըլլալ:

— Ինչո՞ւ, կը հարցնենք: — Անոր համար որ երբ էրիկ մարդիկ տիրացու կըլլան, ստակ վաստակելու համար պէտք է որ շապիկ հագնին միշտեւ կրնորք պէտք է որ... հանեն:

Սուս չէ:

“ԽԱՒԱՐԵԱԼ, ՄԸ (ԻՐԱՅԱՆ ՖԱՆԹԵԶԻ)

Մեծ մարդիկ, խնդալ տորկեցէք:

ՆԻՁԷ

Քանի որ խնդրը Սահմանադրութեան վրայ է, ձեզի բան մը պատմեմ: Ես ալ ուրիշէն խեցի:

Սրճարանի մը մէջ նստած էինք, ես ու Գարմէն Աղան: Ինչպէս եղաւ չիտեմ, խօսքը քաղաքականութեան վրայ եկաւ:

— Խայտառակութիւն, եղբայր, խայտառակութիւն, ըսաւ խօսակիցս, ծովի առատ յորձանք մը արձակելով. ըրածին շէնք շնորհք խայտառակութիւն է...:

Ձի կըցայ հասկնալ այս խօսքէն իր չէզոք կամ կուտակեցական ըլլալը. որովհետեւ քաղաքական բուռն պայքարի մը միջոցին՝ որու որ իր կարծիքը հարցնեն՝ անպատճառ պիտի պատասխանէ ընդի:

— Խայտառակութիւն, եղբայր, խայտառակութիւն. չէզոքը երկու «բարթի»ներուն ալ համար, կուտակեցականը, հակառակ կողմին:

— Ե՛, ըսի ճշդիւ փափաքելով, Սահմանադրութեան կողմէն էք:

— Հէ՛, Սահմանադրութեան մի... ըրաւ բարեկամս, հոգեւոր տեսածի պէս դեմքը ծամածռելով և բարկութեան ձիւնը դադրեցնելով: Սահմանադրութեան մի. գեանիկ տակը անցնի Սահմանադրութեան ալ, Սահմանադրութիւնը պաշտպանողներն ալ, հիմայ բերնէս խօսք մը պիտի ելլար ի՛նչ... ինչ է նէ...:

Ե՛...:

Ձեք կրնար զարմանալ երեկայել, իմ Գարմէն Աղան յիսուննոց շուկայի մըն էր. յիսուննոց հայր սահմանադրական չըլլայ Տէ մե՛նք ըլլանք, եղբայր: Մայիս 24ներ տեսնողները սահմանադրական չըլլան Տէ Սեպտեմբեր 18ներ և Օգոստոս 16ներ տեսնողները ըլլան...: Ինչպէս կ'ըլլար որ Գարմէն Աղան, որ իր ժամանակի բոլոր երիտասարդներուն հետ Սահմանադրութեան բոլոր շոգենաւները նստած, ծաշերը կերած, զինիները պարպած, երգերը երգած էր. Սահմանադրութեան մէջ ծնած, սնած, մեծցած իմ Գարմէն Աղան ինչպէս կ'ըլլար որ կ'ըլլար ասանկ զէմ կը խօսէր Սահմանադրութեան...: Ինչ ապերախութիւն: Անոր խեղք չէր հասնէր կոր չիտեմ, հարցումը ուղղած ասեմս՝ 400ին 200 վստահ էի

Գ. Է. ՄԷԼ ՎԱՃԵԱՆ

ԳԱՇԻՐԷ — ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՑՅՆԵՐՈՒ. ԳՈՂԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ՖՕՆՕԿՐԱՅՆԵՐՈՒ

որ «Սահմանադրական եմ» պատասխանել պիտի փութար յիստունսց հայր։

—Ինչու, ինչ կայ որ, Գարրիէ Աղաս, ըսի, առ ինչ բարկութիւն է. Սահմանադրութիւնը ձեզի ինչ ըրաւ քի, աղբար. դուք կերաք խմեցիք, մենք պէս չի կրցանք մարսել. ծուծը կերաք ոսկորը մեզի ձգեցիք. խնջոյքը դուք ըրիք, մեզի թողուցիք աւելցուցիք և աւելցուցիք, կեղեկները, կուտերը, քացիսած խմուկները, ... չի մարսուելիք... յօգուածները, չի ծածուկելիք... Թերթերը, չի կլուկելիք վէճերը... մէյ մըն ալ երբ Սահմանադրութեան գէմ կը խօսիս կոր... խեղճը բեզի ինչ ըրաւ որ...:

—Ինչ ըրաւ մի, պօռայ Գարրիէ Աղաս կաս կարմիր կտրած, և ծուխի յորա շունչ մը երեսս ի վեր արձակելով. կարծես իր հրեղէն բարկութեան մուկն էր որուն մէջ գիտ խեղճի կողմէր... Սահմանադրութիւնը ինչ ըրաւ մի... Ձգէ՛, Աստուածդ սիրես, ուրիշ խօսք չունիս... գիտ մեղքը մի խօթեր իրիկունով։

Լուց. կոահեցի որ լեզուին աակը բան մը կար։ Ինչ արգեօք։ Շուտով գուշակեցի որ «սկզբունք» ի խնդիր մը ըլլալու չէր. անանկ բանեքն բռնող չէր մեր Գարրիէ Աղաս, յիստունսց շուկացի, ոչ կը գնէր ոչ ալ կը ծախէր այդ ապրանքէն։ Անձնական զգացումի կամ շահու խնդիր մ'ըլլալու էր։

—Է՛, ինչ կայ, ինչ է եղեր նայինք, Գարրիէ Աղաս, ըսի աղաչաւոր շեշտովը մէկուն որ դիմացինէն շահեկան պատմութիւն մը կ'ակնկալէ...:

—Սահմանադրութիւնը ինծի ինչ ըրաւ մի...:

—Հա՛, Սահմանադրութիւնը բեզի ինչ ըրաւ, ըսէ՛ որ մենք ալ հասկնանք։

—Տաւալ ինչ պիտի ընէր, պէ՛... քիչ մնաց Սահմանադրութեանդ «սայլէն» անդիի աշխարհը կ'երթայինք կոր...:

Գիտեմ որ Սահմանադրութեան «սայլէն» շատ մը բաներ եղած են և կ'ըլլան. բայց «անդիի աշխարհը երթալ», ասիկա նոր էր ինծի համար։ Ձեռքերս շփշփեցի «գրական» ուրախութեամբ։ Միայն զի որ եթէ Գարրիէ Աղասին պատմելիքը յուսացածիս պէտ շահեկան բան մը ըլլար, զայն արգոյ ընթերցողացս հրաժեշտեմ, իմ ճաշակովս լաւ մը խոհարարիւ կ'ստըն։

Պատմողներ կան որոնք անտանելի են երբեմն։ Չ'իշտես ինչ հաճոյք կ'զգան քեզ անհամբերութենէ ճաթեցնելով, բերնիդ ջուրերը վազցնելով։ Կարծես առաջուց կը պատառատին, մտովի քաղ կ'ընեն ըսելիքներն, աղւոր սկզբնաւորութիւն մը կը փնտռեն,

կ'երբեք, կը շտկուին, կը հազան, կը խնջեն, կը ծխեն, մոխիրը կը թափեն, չորս կողմը կը նային՝ Հոգին Սուրբէն օգնութիւն և ներշնչում փնտռելու ձեռով մը, ունկնդիրներուն շրջանակը կը դիտեն պահ մի, և երբ ամեն բան կարգին է, շողմնաւոր մեկնելու կազմ ու պատրաստ, նշանը կուտան. յառա՛ջ, Գարրիէ Աղաս ալ ասոնցմէ էր, ո՛չ գիտութեամբ անշուշտ, այլ պատմելիքին բնութենէն, անկէ զրացած բարկութենէն, ցաւէն։ Սիկառիթ մը սկսաւ և լմացնելու մօտ էր, և զեռ պատմութեան առաջին բառը չէր արտասանած։ Միայն զլուրը կ'երեքցնէր և արագ արագ կը ծխէր. ասիկա գործին չէր գար։

—Է՛, Գարրիէ Աղաս, ըսի երկշուռ ձայնով մը, թեթի մը մշտելու պէս։

Առանց պատասխանելու՝ ետին դարձաւ և կանոսնը ձայնեց։

—Մասթիքա մը բեր, մեղեցիկով...:

Համբերութիւնը կեանք է կ'ըսեն... Սկսայ համբերել։ Մասթիքան եկաւ. Գարրիէ Աղաս ջրի գաւաթը առաւ, բանի մը կաթիլ թափեց օղիին մէջ, ձեռքի այն ըզգուշաւոր և փափուկ շարժումովը որ թիրեքներուն յատուկ է. յետոյ օղիին գաւաթը առաւ, մինչև աչքը բարձրացուց, լոյսին բռնեց, գիտեց ջրին կատարած յեղափոխութիւնը օղիին մէջ, և՛

—Գէշ օղի չ'երևար կոր ըսաւ։

Ուսով մը առաւ, վրայէն ջուր խմեց, ձիթապառու մը առաւ, վրայէն վարունդի շերտ մը, ասոր վրայէն պղպեղ մը, բերանը սրբեց թաշկինակով, մէկ երկու շունչ ծխեց և ինծի նայելով շեշտակի։

—Սահմանադրութեան ինծի ինչ ըրած ըլլալը կուզես իմանալ, հա՛, պատմեմ ցե՛ մտիկ ըրէ։

Թատրոնին մէջ երկար սպասումէ մը ետք՝ վարագոյրին բացուելու միջոցին՝ ինչ կ'զգանք՝ ձիջդ ես ալ աս զգացի այս երջանիկ վայրկեանին։ Ամբողջ ականջ կտրեցայ։

—1869ին էր կարծեմ, չէ՛ 1868ին...:

Ֆի 2 տարի ետքը Պէյօղլուի կրակը եղաւ, ինչ է մէ տարի մը եղիլ տարի մը պակաս, խնդրել տուող վրայ չէ. Սահմանադրութեան էն «փառախ» ատենն էր, «խաւարեալ» բնաւ մնացած չէր կարծես. Սահմանադրութեան քէֆը, «վարձանքը», զրօշակները, կերակուրները տեսնալուն պէս, խաւարեալները «պիլ» չէր յոտն ինչ «եղիցի լոյս»ով մը, լուսաւորեալ եղեր էին. ըսածս իրաւ է. Արիւստիս Աղաս մը կար, աս մարդը տղայութեան մեզի կուգար, ան ատենը 35նոց մը կար. ինք Ամիրաներուն կողմէն էր, հայրս ալ լուսաւորաւորներուն։

կը յիշեմ որ ամեն դարուն սաստիկ կոխ, վէճ կ'ըլլար երկուքին մէջտեղ։ Ես եկայ մեծցայ, երիտասարդ եղայ, Լ. Երիտասարդ Աղաս ալ 35նոց մը եղաւ. ինչ կ'ըսես, աղբար, ան «սօփու» խաւարեալը մէկ Սահմանադրութիւն չէր փախցնէր. մենէ աւելի կեցցէ՛ ազգ և Սահմանադրութիւն կը պօռար։ Օր մը իրեն ըսի քի աս ինչ է Աղաս Երիտասարդ Աղաս, դուն չէիր քի ասելից 10—15 տարի առաջ մուր չի մնաց չի քսէիր Սահմանադրութեան երեսին, հիմակ ալ եւ լեր կը պագնես կոր... Ասոր շէնք շնորհք «թեքած ընել» կ'ըսեն... Աղբար, ինչ ընեմ, ըսաւ. ճաշ, զինի, պտուղ, երգել, պոստ կանչել ուր որ կայ ես ան կողմէն եմ... Ես զիտնայի Սահմանադրութեան անանկ շէֆէր բան ըլլալը, սկիզբէն անոր փեշէն կը բռնէի. էշու պէս Ամիրաներուն պոչէն բռնեցինք, օր մը անոնք գային՝ պոչի ձեռքերնիս մնաց... Տաւալ ասոր պէս քանկներ... Իս հարցնես նէ, ան ատենը «թապէ» երկասարակ, կրակուրոց բան մը, չըրածս չի կար. Սահմանադրութեան ամեն հարկինքներուն մէջն էի, երգ, խաղ, ճաշ, ճառ, ինչ որ կուզես... ինչ է մէ, խնդրը ասոր վրայ չէ հիմայ... Տարի մը, միտք ըրի քի... բարով խերով չընէի... Հարկաւ իմացած ես, ան ատենները շոգնաւորով Պէյօղլու կ'երթայինք, 15—20—30 շոգնաւոր կը բռնէինք, կը զարդաւորէինք, կը հագուեցնէինք, կը սրգուեցնէինք, զրօշակներով, քէֆէներով, ծաղիկներով, պաւլիստիլիֆալներով, հայերէն տաճիկներ երգերով, կեցցէներով մեցցէներով կ'երթայինք Պէյօղլու։ Աւա՛ս աս շոգնաւորները ազգին կողմէն բռնուած չէին. չէ՛, բռնողը աս ու ան։ Գրիգորը ինչեմ կիրակուր, ուզողը։ Տարի մը, խաչք պիտի ուտենք եւս՝, հայտէ մենք ալ սա բանը ընենք ըսի, աս մեն մարդ կ'ընէ կոր մէ հէյրպէսէ բան մը գիտէ կոր. սընոր համը մենք ալ նա յիշեմ, առաջի տարի է ծախք ըրինք Սահմանադրութեան «ուղար»ին, պաւլիստ աս փարաներուն կէտը օշտու ճաննեք. ետքը ազգէ կ'անցնէինք եւս, Քոստանով մէկտեղ. բարեկամ մը ունէի, Գրիգոր Աղաս կ'ըսեն, հիմա վաճառ է գուաւորը, Գալիպօքը լարը պատմածի էր ան ատեն... եկո՛ւր պէ՛ սա բանը ընկերակցութեամբ ընենք, ըսի... քիմէն աղիցի ջրջայ, ան ալ ինծի պէս աւանակ, ընենք, բէք աղէք ինչը ըրեր ես ասիկա, ըսաւ։

Մ. Ս. ԿԻՒՐՃԵԱՆ
(Մտնացեալը յաջորդով)

Ձաթմա, աւելի երկշուռ. արգէն կը սկսէր քանի մը հարցումներ ուրուագծել։

—Անունդիդ ինչ է, Օրիորդ։

—Ժէրմէն։

—Ժէրմէն, ա՛ ինչ աղւոր անուն. այնպէս չէ՛, ինչպալ։

Ինչպալ տանջանքի մէջ էր. եկածին ի վեր՝ հոգին բերանը կը սպասէր՝ ջանալով որ, զատարակուհիին խօսքերուն կամ շարժումներին մէջ, բառ մը, շարժում մը գտնէ պակասութիւն ցուցնող և որ, հանրմին իմաց տրուելով, կարենար անոր մտքին մէջ փոքրիկացնել զանի։

Բան մը չգտնելով, հանելէ դատ ուրիշ բան չընալով ընել ժէրմէնի ամենազոյգն խօսքերուն, նախապէս համարեցաւ ելլալ երթալ և կարծեց որ ազգէ էր տղաքանքն ալ առնել տանիլը, ընթերցը պատրուակ բռնելով։

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Մեզի գրկուած յայտարարութենէ մը ուրախութեամբ կ'իմանանք թէ Օրիորդ Մարի Պէյերեան, ծանօթ գրագիտուհին, իր ծրագրին իրականութիւն տալով՝ առաջիկայ Յունվարէն պիտի սկսի հրապարակ հանել իր «Արտեմիս» գրական հանդէսը, որ պիտի գայ պակաս մը լեցնել Հայ լրագրութեան մէջ, տալով անոր կանաչի ինդիքներով ըզբաղող պարբերական հանդէս մը որուն պէտքը օրէ օր զգալի կը դառնար։

Կը շնորհաւորենք Օրիորդ Պէյերեանը իր այս գեղեցիկ գաղափարին համար և բոլոր սրտէ յաջողութիւն կը մաղթենք մեր նոր և աշխու պաշտօնակցուհիին։

—Աղեքսանդրիդ «Հասարակային Ազատ Համալսարան»ի վարչական ընդհանուր ժողովի վերջի նիստին մէջ միջազգային քօմիթէի մը ընտրութիւնը կատարուելով, Հայերու կողմէ անգամ ընտրուած է Տիար Միհրան Գալիպեան, Աղեքսանդրիարեան ծանօթ փաճառակաւոր։

—Երկու Հայ պատուաւոր երիտասարդներ, երկուքն ալ հասարակապէս ծանօթ, բանակոտի մը հետեանօք, ապաւինել փոխանակած են երկի իրիկուն Շարա Մուհամմադ Ալի փողոցին մէջ, խոհարար Գարիէի ճաշարանին առջև։

Կ'ըսուի թէ այս միջադէպը դատարաններու առջև պիտի տարուի։

ՏԱՃԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Կայսերական իրատէ մը կ'արտօնէ ծխախոտի Բէթիին հետ միջոց մը խզուած բանակցութիւնները վերսկսել կարեւոր փոխառութեան մը համար։ Բանակցութիւնները վերսկսուած են Օգոստոս ամսոյ կարգադրութեան հիման վրայ, որն որ բանի մը յանգած չէր։ Արդէն երկու խորհրդակցութիւններ կատարուած են Ելմուտական նախարարութեան մէջ։

—Ձանազան շրջանակներու մէջ կը հաստատեն թէ հոկտեմբեր 1ին Գերմանիոյ զեռպանին տրուած ունկնդրութեան միջոցին Սուլթանը ականարկութիւն ըրած է Պաղտատի երկաթուղոյն ծրագրին վրայ։ Այս ծրագիրը վերջնական համաձայնութեան մը առարկայ պիտի ըլլայ, որն որ կը պատառատուի արգէն Ելմուտի մէջ. Կը յուսացուի որ այս կարգադրութեան ստորագրութիւնով Սուլթանը պիտի կարողանայ փոխառութիւն մը փրցնել Տէյօք պանքէն։

—Ալ գասերը վաղը կը ս'իջ, Օրիորդ։

—Ու անոնց ներկայ գտնուելու ձեզի ստիպող չկայ, գեղեցիկ ինչպալ, պատասխան տուաւ Սթա Ապուհա գեղեցիկ ամբարտաւանութեամբ։

Ինչպալ սոսկալի նայուածք մը արձակեց անոր վրայ, բայց անառակ աղջկանը հոգն էր... նոյեցաւ ետեւէն մինչև որ հեռացաւ գնաց, յետոյ՝ երբ անոր քայլերուն թուրքները ներանցներուն խորութեանը մէջ մաքրեցաւ, դարձաւ նստաւ. Ժէրմէնի ոտքին առջև, անոր երկու ձեռքերը բռնեց և լուրջ ձայնով մը ըսաւ։

—Այս առտու ըսածիս՝ հաստատեցիք, օրիորդ. հիմա հասկցա՞ք... Տեսա՞ք ինչ աչքերով այդ ինչը կը նայէր ձեզի։

—Կ'ատէ կոր գիտ, միջոց Ժէրմէն, և սակայն, ինձմէ ինչ կը վախճայ կոր... շիտակ միտք չունիմ իրմով գրագիտու։

Գ. Ե. Կ. Մ. Ե. Լ. Բ. Ո. Ն. Ե. Ա. Ն.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԷՎԵԻԲԻՑԷ — ԳԼԽԱԻՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԿԻՆ ԶԱԲԻԹԷԻ ԾԷՆԲԵՐ

—Հաստատի աղբիւրներու նայելով, Լօ-
րանտայի միջադէպին համար թրքական հա-
կառաւարը չպիտի ընդունուի։
Նոր պիտարութիւն մըն ալ ծագելու վրայ
է. Հանրապետ շինութեան նախարարու-
թիւնը կը մերժէ քարափներու ընկերութեան
թոյլատրել քարափներու կից հողերու սահ-
մանագծումը կատարելու համար, և աս ար-
գելքին պատճառ կը բռնեն թէ Բ. Գրան
ձգուած մէկ տարուան պայմանաժամէն ա-
ռաջ — որու միջոցին թուրքիա իրաւունք
ունի քարափները գնելու — ընկերութիւնը
իրաւունք չունի բանի մը ձեռնարկելու ըստ
Օգոստոս 24ին Պ. Բօնսթանի միջամտու-
թեան հետեանցով տրուած արտօնութեան
իրաւունք, հետեալ քարափներու ընկե-
րութեան կացութիւնը դեռ առաջուան պէս է։
—Թուրք պաշտօնական շրջանակներու
մէջ կը յայտարարեն թէ Բ. Գրանը Գր-
վիթ զօրք զրկելու մտադրութիւն չունի, ա-
սիկայ ճիշտ է, որովհետեւ թուրքիա պիտի
որ ի պահանջը հարկին Անգլիայ չպիտի
թոյլատրէ Գրվիթ զօրք ցամաք հանելը։
Թուրքիան երբեք գերիշխանութիւն տարա-
ծած չէ Գրվիթի վրայ և եթէ հակառակ
Անգլիայ արգելքին այդպիսի քայլ մը առնէ,
կրնայ շատ մը իրեն համար անախորժ և
իր շահուն աննպաստ կոխներու տեղի տալ։

ՎԵՅԱՄՍԵԱՅ ՀԱՇՈՒՎԿԵԹ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՐԲԱՆԱՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
1901 Յունիս 1է ց'վերջ Յունիսի

Մ Ո Ւ Տ Ք	
Նախորդ շրջանին մնացած պատ- րաստի գրամ	5977 50
Նախորդ շրջանի ապառիկներէն զանձուած	156
Բաժնեգրներէ հաւաքուած	3246
Թատերական ներկայացումէն ըն- կերութեան թափին	2000
Նուիրատուութիւնը	1515 50
Քրէտի ֆօնտէի արժէթուղթի տոկոս	29
Վիճակահանութեան ապա- ռիկներէն զանձուած	366 50
Գեր. Այլվազան Եպ. որդեգրած որբուհիի վեց ամսեան	263
Պանք Օթոմ. ինայոյական սըն- տուկին տրուած զանազան թը- ւականներով 7147,50 գումա- րին 2 1/2 0/10 վեց ամսեայ տոկոս	67 50
Նախորդ շրջանին մնացած ապա- ռիկ	324
Ներկայ շրջանի վեց ամսեայ ապառիկ(*)	1056
	14998

—Ախ, սիրելի օրիորդ... որչափ չգրա-
դիք՝ այնչափ աղէկ է։ Բայց, կ'երբնում,
ինքը ձեզմով պիտի դադարէ. բոլոր խօսքեր.
նիւթ, բոլոր ըրածներնիւ պիտի լրտեսուին.
ընել ուզած բոլոր աղէկ բաներնիւ դէշի
պիտի տարուին։ Այլ ձեզի կը մնայ զօրա-
ւորագոյն ելլել, և թունաւոր անասունի մը
պէս ոտքերնուդ տակ ձգմը այդ անգամ
կինը։

—Բայց ինչու՞ այդ ասուցութիւնը, կը
կրկնէր Ժերմէն՝ շուրաւ մնալով Սթա Ա-
պուհայի յամառօրէն խօսելէն այդ վտանգ-
ներուն վրայ՝ որոնցմէ դեռ բան մը չէր
հասկնար։ Վայրկեան մը Սթա Ապուհայ
վարանցեալ՝ մօտ ամեն բան յայտնելու.
գերուհիին ապականեալ բնաւորութիւնը, փա-
շային հետ անոր գաղտնի յարաբերութիւն-
ները, անոր վրայ ունեցած ազդեցութիւնը
զոր պաշտօնին մէջ ամենքը գիտէին, թէ այդ

Ե Լ Ք	
Թղթակցութիւնը	3
Որբան. աշխարհի գնուած Բրէտի ֆօնտէի պարզաւար արձեթուղթ (264 ֆր.) թիւ 195,184	4018 50
Գրական պիտոյը	24
Ճիւղութի գրկուած նամակաց ծախք	16 50
Պատրաստի գրամ Պանք Օթ. ինայոյական սնտուկ 2 1/2 0/10 տոկոսով	7147 50
Այլ գումարին վեց ամսեայ տոկոս	67 50
Ապառիկներ	1380
Պատրաստ առ ձեռն	5341
	14998

Գործ. Ժողով Վասպուրականի Որբախնամ ընկերութեան	
Ա. տեղագլխիւր	Ա. տեղագլխիւր
Օհան ԽնՏԱՄԵԱՆ	Գ. ԽՍԱԳՈՒԼԵԱՆ
Հաշուակալ	Գանձապահ
Մ. Յ. ՍՕՍՕՅԵԱՆ	Ն. Ա. ԱՎԵԱՆ
Խոկանին հետ յար և նման ըլլալը կը հաստատենք։	
Ընդդ. Ժողովով	
Ա. տեղագլխիւր	Ա. տեղագլխիւր
Յ. ՍԵԹԵԱՆ	Ա. ԱՆԱԼԵԱՆ

(*) ԾԱՆՕԹ. — Ներկայ շրջանին վեց-
ամսեայ ապառիկը ներկայացնող 1056 գրշ.ի
գումարը հաշուեկշիռը պատրաստուելէն յի-
տոյ՝ մասամբ զանձուած է։

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ըստ նորագոյն տեղեկութեանց Ն. Բ.
Խոխիլին Գահրէի վերադարձը Նոյեմբեր 6ին
անդի պիտի ունենայ։
—Արարական թերթերուն ըսածին նա-
յելով Մայր-Խոխիլին այս ձմեռ Պոլսի
պիտի անցնէ և պիտի բնակի Պէպէքի ա-
մարանոցը որ վերջերս այդ նպատակա-
նորոգուեցաւ։
—Գերմանական «Շապօթ» դպրոց—մար-
տանաւ Նոյ. 16ին Աղբըսանդրիա պիտի
հասնի եթէ երբէք այդ միջոցին ժամտախ-
տի որեւէ դեպք չի պատահի այդ քաղաքին
մէջ։
Այս շոգեհասին մէջ կը գտնուի Գեր-
մանիոյ կայսեր երրորդ որդին Ատալպա
Իշխանը։
—Հանգուցեալ Պ. Սալվալոյի այրին
1000 ոսկի նուիրած է Աղբըսանդրիոյ Յոյն
գաղթականութեան։
—Խոտայիոյ դիւանագիտական գործակա-

կինը որչափ սարսափով կը վախճար որ մի
գուցէ նսրելը, ինքը Ժերմէն, իր գլխուն նա-
խանձորը մը դառնալ՝ որ օրին մէկը ելլար
տարինքը տեղաւոր մեքենայութեանց պտու-
ղը ձեռքէն խլէր։ Բայց Ժերմէնի ջիւղ ու
պայծառ նայուածքին, անոր սրբափայլ ճա-
կատին հանդէպ, Սթա Ապուհայ, որ տարի-
քով անկէ պզտիկ էր, բայց որ՝ իբրեւ ճըշ-
մարիտ արեւելցի աղջիկ՝ արդէն գիտուն էր,
չհամարձակեցաւ խօսել։ Այդ աղջիկը որ
արդէն այլեւ բանի մը վրայ չէր զարմանար,
որ ամենէն հրէշաւոր գաղտնիքներն անգամ
բնական կը գտնէր, վարանցեալ այդչափ ա-
նարգութիւններ յայտնել այդ երիտասարդ
աղջկան, որ կ'ըզգար թէ տգէտ էր և ան-
կարող վատ մտածում մը ունենալու, որ այն-
չափ անբիւր էր որչափ ուրիշները ապական-
եալ էին, և այնչափ գոռոզ արժանապատ-
ւութիւն մը, այնչափ անդեղուն վարմունք

տար Պ. Թուհիին արձակուրդով խոտալիա
ուղեորեցաւ երէկ։
Հաւանակաւ է որ Պ. Թուհիին խոտալի-
ան պատերազմ կարգուի Հանրային Պար-
տաց վարչութեան մէջ. հանգուցեալ Պ.
Խօրտնայի տեղ։
—Հանրապետ շինութեան նախարար-
ութիւնը 1000 ոսկի վարի մը բացած է Էդ-
պէլիկի թատրոնը նորոգելու համար։
Բաժը ամբողջովին պիտի փոխուի. օթեակ-
ներու զարդերը նոր մէթոտով մը պիտի շին-
ուին և հին նստարաններու և թիկնաթոռ-
ներու տեղ նորեր պիտի գրուին։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԷԿԻ ՀԵՌԱԳՐԵՐ
ԼՈՒՏՈՒՆ, 9 Հոկտ. — Սըր Ռեճինալտ
Ուինկէյթ և Լէտի Ուինկէյթ մեկնեցան,
Սուտան վերադառնալու համար։
«Թայմ» կը կարծէ թէ Ռուսիան որո-
շած է անմիջապէս Ահմադատէն Մէշէտ
երկարելիք երկաթուղին շինութեան ձեռ-
նարկել։
ՍԻՄՒԱ, 9 Հոկտ. — Հապիպ-Ուլլահ
Խանի գահակալութիւնը առանց զիմադրու-
թեան ընդունուած է իր եղբայրներէն և
Սիրտարներէն։
ԲԻԷԹՕՐԻԱ, 9 Հոկտ. — Թշնամեաց
գլխաւոր գունդը, ամսոյս 6ին, Վրայհետէն
20 մղոն դէպի հիւսիս—արեւելք, կոխի բըռ-
նուած է, կիսաբաժնի զօրավար Գիշնէրի
խմբին մէկ մասին հետ։ Թշնամին հիւսիս
նահանջած է։ Մեր գունդը դեռ կը շարուն-
ակէ կոխը։ Մեր կորուստներն են 3 մեռեալ,
որոնց մէջն է 16րդ. Հիւսարներէն տեղա-
կալ Բիլքիթըն, և 10 վիրաւորեալ։
ՔԷԲԵԹՈՒՆ, 9 Հոկտ. — Հոս և գաղ-
թալայրի ուրիշ նաւահանգիստներուն մէջ
պաշարման վիճակը հրատարակուած է։
ԼԱՀԷՅ, 9 Հոկտ. — Այսօր հոգեհան-
գիստ մը կատարուած է Հար. Ափրիկէի
պատերազմին հրատարակութեան յիշատա-
կին համար։ Բոլոր տեղական իշխանու-
թիւնները ներկայ էին։ Արարողութիւնը
կատարող երէցները Պէշներուն համար ա-
ղօթած և մաղթած են որ Անգլիա հասկը-
նայ այդ պատերազմին անարդար ըլլալը։
ԼՈՒՏՈՒՆ, 9 Հոկտ. — Իվլըրուլ արտա-
սանած մէկ ճառին մէջ, Լօրտ Ռօպերթս
կը յայտարարէ թէ Լօրտ Գիշնէր, որ ա-
մենուն վստահութիւնը կը գրաւէ, երբեք

մը ունէր՝ որ իր երիտասարդութիւնը ամե-
նէն վատթարացածներուն անգամ պէտք էր
որ լուրթին ու յարգանք ազգեր։
—Բնէր նայինք, հարցուց Ժերմէն զոր
Սթա Ապուհայի լուրթիւնը սաստիկ կը հե-
տաքերէր... պատասխան չէք տար...
Շատ սոսկալի բան է ուրիշն ըսելիքնիդ։
—Ձեզի ըսելիք բան չունիմ, պատաս-
խանք տխրութեամբ Զէլազ աղջիկը, դուք
ինքնիս կը տեսնէք, վերջէն... մնաց որ,
կը չափազանցեմ, այս բաները ձեզի խօ-
սելուս կը զղջամ, թերեւ հիմա պիտի չար-
չարուիք։
Ոչ, Ժերմէն չպիտի չարչարուէր, շատ
անվրդով էր, ինքն իր վրայ շատ վստահ,
պատրաստ իր պարտականութիւնը ամբողջ
ընդարձակութեամբ կատարելու։
—Կը տեսնէք, ըսաւ Սթա Ապուհային,
այնչափ ազնուութեամբ պիտի վարուիմ այդ
կնոջ հետ, այնչափ աղէկ պիտի հասկցու-

զինուոր, ձի և կամ պաշար ուզած չէ որ
իրեն դրկուած չըլլայ և այսպէս մինչև հիմա
նորէն կը զրկուի իրեն։
Լօրտ Ռօպերթս կը խնդրէ ազգէն որ նոյն
համբերութիւնը ցոյց տայ ինչ որ ցուցու-
ցած է 1899 Գեկտեմբեր ամսուան մէջ։
ԼՈՒՏՈՒՆ, 10 Հոկտ. — Լօրտ Գիշնէր
կը հեռագրէ թէ Պ. Գիշնէր Բիլքիթըն
անցնելով դէպի հիւսիս խոյս տուած է։
(ՌԻԻԹԷՐ)
ԲԱՐԻՉ, 10 Հոկտ. — Սէնի պատժա-
կան ատենանք մէկ տարուան բանտարկու-
թեան պատապարտեց Պարոն Լէոն Թիւհատը՝
Լիպիւրքէր թերթին մէջ երեցած իր մէկ
յօդուածին համար, որով Ձարը սպաննե-
լու թեղադրութիւններ կընէր։ Պ. Ձար, որ
վկայելու համար եկած էր, դատարանէն
զուրս ելած պահուն բաղմութեան կողմէ
ծափահարութիւններով ողջունուեցաւ։
Կ. ՊՈԼԻՍ 10 Հոկտ. — Սուրբանը սրո-
շած է ընդունիլ Ֆրանսայի դրամական պա-
հանջութեան բողոքելով սակայն ատենց շա-
փազանցութեան դէմ։
(ՀԱՎԱՍ)

Վ Բ Ի Պ Ա Կ
Մեր հինգշաբթի օրուան խմբագրականին
մէջ հետեւեալ վերապահները սարգած են զօրս
կուգանք ուղղել։
Ա. երեսի, Յրդ. սիւնակի, վարէն սիւն-
ով Յրդ. տողին մէջ «չունենայ» բառը
կարգաւ «ունենայ»։
Բ. երեսի, Յրդ. սիւնակի, Կրգ. տողին
մէջ «ծանակ» բառը կարգաւ «ծիծաղ»։
Միւսոյն երեսի, Յրդ. սիւնակի առաջին
տողին սիւլիկը «միայն» բառը կարգաւ «մի-
ենոյն»։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ՓԱՐՈՍ»
Յ. Ս. — ՋԱԿԱՋԻԿ. — Ձեր մամակին
լիւր պատասխան, հաճեցէք անգամ մը ևս
ուշադրութեամբ կարդալ «Փարոս»ի փակ-
տին վրայ դրուած պայմանները որոնց մէջ
չենք կրնար փոփոխութիւններ մտցնել,
հակառակ ձեր իմաստասիրական—քարոյա-
կամ դիտողութիւններուն։
ՏԻԿԻՆ Ս. Փ. — ԳԱՀԻՐԷ. — Այս օր
դրկեցինք։
Թ. Փ. — ՍՈՒԷՉ. — Ներողութիւն եթէ
միւս թերթը մոռացումով չէ զրկուած.
այս օր կը դրկենք։
Ա. Թ. — ԳԱՀԻՐԷ. — Դուք ալ իրաւունք
ունիք։

նեմ իրեն թէ ինձմէ վախճալիք բան չունի,
որ վերջը վերջը դիւ պիտի պաշտէ։
—Ահ իրաւ, շատ անգամ ու վատթար
ըլլալու է մարդ որ անմիջապէս ձեզի չսիրէ.
ևս, օրինակի համար, դեռ հազիւ կը ճանչ-
նամ ձեզի, ու ահա աչքիս լոյսէն աւելի
կը սիրեմ։
Այս վերջին բացատրութիւնը զարմացուց
Ժերմէնը, բայց այն եղանակը որով այս
խօսքերը ըսուեցան՝ անկեղծ էր. այդ ծի-
ծաղաժպիտ դէմքը այնչափ սէր ցոյց կու-
տար՝ որ ինքզինքը արդարեւ յուզուած զգաց։
Առատուէն ի վեր, յանկարծաբայ և կաղ-
զուրիչ այդ բարեկամութիւնը գինքը կ'ամ-
բայնէր։ Արդէն Սթա Ապուհայի խրատնե-
րուն պարտական էր գիտողութեան գիտու-
թիւն մը զոր շարաթիւններով չպիտի կրնար
ստանալ, և յետոյ այնքան բարի ու աղիւս
էր, այդ անակնունչին անձուէրութիւնը,
այդ գորովազուծ բարեացակամութիւնը՝ իր
լքեալ վիճակին մէջ։
(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵԹԵԱՆ

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ — ԳԱՀԻՐԷ, ԱԹԱՊԱԷԼ—ԽԱՏՐԱ, ՆԱԿԻՆ ՋԱՊՈՒՅԷԻ ԵՒՆԻՔԻՆ ԴԷՄ

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Յ

ԱՊՍԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒՆՈՐՔԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊՍԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1843 թ

ՊԱՀՆՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՅՐԱՆԻ

Ապահովագրական ամեն կարելի դուրսբերելու կը գո ծաղիկ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագրութիւն, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՅԻ սակագիրն և ապահովագրութեան զանազան գրութիւնները չուսումնասիրած մի ապահովագրութիւն. — Ընտանեկան պայմաններու
Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐՋԻՍ և Ժ. ՎԱԼԻՅԵՄ, Ընդհ. ներկայաւորելու
Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխավոր գործակալու Գ. ԵԿԱՆՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՅՐԱՆԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ 8 ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԵ [ԲՈՒՄԱՅԻՏ]

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանան ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն, արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Ֆրանսայի և օտար երկրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը գանձէ եղիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաւորով մուրհակներ կուտայ:

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈՒԿԵՆԱԲԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի մէջ ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍՍՈՅ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւորով

ԱՆԲԸՐԷՕՐ ՆԻԲՈԼԱ. տրղթ. թան. 5500
ԲԷՆ ՕԼԿԱ " " 5500

2ԻՍԱՅՈՅ տարողութիւն թան. 5500
2ԱՐ " " 5500

ՇԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի Օտէսա, հանդիպելով ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԻՋՄԻՐ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ ուր կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենաւորուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎԱՏՈՓՈԼ, ՍԵԻ ՇՈՎՈՒ ԱՍԻԱԿԱՆ ԵՋԵՐԲԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՄ և ԱՋՈՅԻ ՇՈՎ:

ՇԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵԱՅԱ, ՊԵՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԳԻՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ Աղեքսանդրիա, Թղթասան փողոց:

Ա Ջ Դ

Թերթիւն բաժանորդագրութիւնը Մանսա-փոսթով կամ փոխանակագրով պէտք է շրկուի հետեւեալ հասցէին:

Direction du journal PHARES

LE CAIRE, Egypte

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

—X—

ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՅԻ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԷՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, Մուսրի փողոց,

Ս. եւ Ս. Սիսնաիի վաճառասան դէմը

Ապրանայ զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Աժանութիւն

Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական

Շնոհկրահներու

Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի:

ԱՅՏԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ

ԱՐԾԱԹ

ՊԵՏԱԼ

ԲԱՐԻՋ

1900



ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՅԻ Ս ՇՈՎԵՆ

ԱՐԱՆՑ

ԿԻՒՆԵՐՈՒ

ԵՒ

ՏՂԱՅՈՅ ՀԱՄԱՐ

ՀԱՆԴԵՐՁՆԵՐ

ԸՍՏ ՎԵՐՋԻ ՆՈՐԱՅԵՒՈՒԹԵԱՆ

ՉԱՓԱՆՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ

ԱՂԵՔԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԷ

ԱԿԵԳՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խաղական հրամանագրով

25 Յունիար 1898

Դրամագրութիւն Անգլ. սակի 4,500,000

Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ: Մանաճիւղեր. Աղեքսանդրիա, Մանսուրա, խաղթում:

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանան ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ:

ԴԺՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՍՐՏԱՆԱՐՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պէտք է ամեն ճաշէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷԻ անուն աղբուղէն մէյմէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷԻՐԸ տրիշ աղբուղիի գեղերու նման չի խանդարեր ստամբուլը:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

2—316

ԱՌԻՍԱՆԱԲԱՅՈՅՈՒՆ

ՍԷՏԷՖՃԵԱՆ

ՀԻՄՆԵԱԼ Ի Կ. ՊՈԼԻՍ 1882 թ

ՓՈԽԱԴՐԵԱԼ Ի ԳԱՀԻՐԷ 1898 թ

ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ — ՊԱՋԱՐ-ՄՈՒՐՈՒՐ

Այս ծանօթ լուսանկարատան մէջ շատ խնամալ և վերջին դրութեամբ կը պատրաստուին ամեն մեծութեամբ և ամեն տեսակ լուսանկարներ. կռուիներ և ակրան-սիւրմաններ:

Գուրբը առնուելիք լուսանկարներու համար դիւրաւ մատչելի պայմաններ:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՏՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՇՎԱԿ

ԳԻՆԵՐՈՒ ՉԱՓԱՆՈՐՈՒԹԻՒՆ

ՔԻՆԾԸԼ ԵՒ ՍԻՄՈՆՍ

Հաստատեալ յամին 1860

ՂԱՅԱԳՈՐԾԷ-ՂԱՅԹԱՅԹԻՉԷ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ

Այս նշանաւոր փուռին մէջ կը պատրաստուին ամեն տեսակ հացեր, պիսիւրներ, եւ քիչեր:

Այս փուռին մասնաւոր կառքեր կը շրջապային Գահիրէի ամեն թաղերու մէջ, ինչպէս նաեւ Զէյթուն և ի Հէլվան:

Թէվֆիդիէ, Պուլաքի ճամբայ. ԳԱՀԻՐԷ

Թէլէֆօն թիւ 504.